

ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ 15-19-ՐԴ ԴԴ. ՊԱՐՄԿԵՐԵՆ ՆՐՈՎԱՐՏԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանի, Անդրկովկասի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրների 15-19-րդ դդ. սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար հարուստ և բազմազան նյութեր են պարունակվում Մատենադարանի պարսկերեն վավերագրերում:

Վերոնշյալ պարսկերեն վավերագրերը կարելի է բաժանել երեք խմբի¹:

Առաջին խմբի մեջ են մտնում շահերի հրովարտականն ու հրամանագրերը, խաների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հրամանագրերը և մահմեդական հոգևոր առաջնորդների կողմից զանազան վիճելի հարցերի վերաբերյալ արձակած վճիռները:

Երկրորդ խմբի մեջ են մտնում միայն շարիաթական-նոտարական գրասենյակներում կազմված արձանագրությունները, որոնք վերաբերում են հողի կամ սեփականության առուծախին, նվիրատվությանը, վարձակալման և այլ գործարքներին:

Երրորդ, համեմատաբար ավելի փոքր խմբի մեջ են մտնում այն բոլոր ոչ շարիաթական-նոտարական բնույթի համաձայնագրերը, պայմանագրերը, համախոսական գրություններն ու այս կարգի այլ փաստաթղթերը, որոնք վերաբերում են առանձին քաղաքացիների միջև տեղի ունեցած ժառանգական վեճերին, տարբեր գյուղական համայնքների միջև սահմանային և ոռոգման հարցերի շուրջ առաջացած տարաձայնություններին:

Վավերագրերում իրենց իրավական արտացոլումն են գտել հողատիրության ու հողօգտագործմանը, հողի սեփականատիրոջ և նրա հողերի վրա աշխատող հողագործ հպատակների դասակարգային փոխհարաբերություններին, ինչպես կազմածատիրոջ, այնպես նաև գյուղական համայնքների իրավասության սահմաններին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Թոշափելի թիվ են կազմում հատկապես 17-րդ դարի հրովարտականները, որոնք մեծ մասամբ ձեռք են բերված Էջմիածնի կաթողիկոսների կողմից²: Նկատելի է, որ շահերի փոփոխման շրջանին վերաբերող հրովարտականները ավելի շատ են: Ընդունված էր, որ մոր շահի զահակալությունից հետո կաթողիկոսներն ու այլ վանքերի առաջնորդներն, իրենց հետ վերցնելով նախորդ շահերից ստացած հրովարտականները, գնում էին մայրաքաղաք Սպահան՝ դրանց հիման վրա մոր հրովարտականներ ստանալու:

Նույնը տեղի էր ունենում նաև այն ժամանակ, երբ կաթողիկոսներից կամ առաջնորդներից մեկը փոխարինում էր մի ուրիշին: Նման դեպքերում այդ մասին նշվում էր հրովարտակի սկզբում:

Հարկային, հասարակական և վարչական տերմինները, ինչպես նաև աշխարհագրա-

¹ Տե՛ս Ն. Դ. Փափազյան, Մաքենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան, 1956 թ.:

² Ս. Եր-անցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873 թ.:

կան անուններն ու օտար անձնանունները ներկայացրել ենք բնագրի պարսկական արտասանությամբ:

Տերմինների բացատրությունը տրված է որքան հնարավոր է համառոտ՝ աշխատելով տալ տերմինի այն հիմնական իմաստը, որ պարունակել է տվյալ ժամանակաշրջանում:

ازدار - «ազդար»- նշանակում է արժանի, պետական պաշտոնյաներին և այլ բարձրաստիճան անձանց, նրանց դիրքին և աստիճանին արժանի պարտադիր կարգով հատուցվող «նվերը» կամ նվիրաբերությունը:

بهرچه - «բահրաչե»- Այսպես էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից կալվածատիրոջն ու պետությանը վճարվող հողային վարձավճարը³:

بيكار - «բիգար»- Հողագործ գյուղացիության պարտադիր անվճար աշխատանքը ամբողջությունների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների վրա, ինչպես նաև ուղղակի արշավանքների ժամանակ⁴:

دست انداز - բառացի նշանակում է «ձեռք նետող»: Խոսքը վերաբերում է պետական պաշտոնյաների կողմից զանազան պատրվակներով գյուղացիներից զանձվող տուրքերին, երբ նրանք «ձեռք էին երկարում» գյուղացիության ունեցվածքին և փորձում էին դրան կամ այլ արժեքավոր իրեր շորթել նրանցից⁵:

تيولدار - «թիուդար»- Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան զինվորականներն ու պետական պաշտոնյաները, որոնք աշխատավարձի փոխարեն ստանում էին գյուղերից զանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի զանձման իրավունքը:

توبره - «թոբրե»- Տոպրակ, հացահատիկի կամ ընդեղենի պարկ⁶:

خواجه - «խաջե» կամ «խոջա» - Այսպես էին կոչվում մեծահարուստ վաճառականները: Այն խոջաները, որոնք առևտրի բնագավառում ձեռք բերած հարստությամբ սկսում էին կալվածքներ գնել, հաճախ ազդեցիկ դիրք էին զբաղում արքունիքում⁷:

حقابه - «հաղաբե»- Տերմինը կազմված է արաբերեն حق «իրավունք» և պարսկերեն آب «ջուր» բառերից և նշանակում է «ջրի իրավունք»: Այսպես էր կոչվում ջրի այն բաժինը, որ հատկացվում էր տվյալ հողամասի, հանդի, այգու և, առհասարակ, որևէ մշակելի տարածության ռոտզման համար:

مالکانه - Կալվածատիրոջը կամ մալիքին վճարվող հողային վարձավճար:

من - «ման»- Ծանրության չափ, որ հավասար էր մոտ 4.5 կգ⁸:

نامردار - «նամորդար»- Այս բառը կազմված է ն «նա» ժխտական մասնիկից և مردار «մորդար» պիղծ բառից: Հայ գյուղացիներից մի բան շորթելու միջոց էր մշակվել նրանց տանը իջևանող պաշտոնյաների կողմից: Պատճառաբանելով, որ իրենք, շփվելով հայերի հետ և սնվելով նրանց տանը, ըստ մուսուլմանական հասկացողության, պղծվում էին, ուստի և իրավունք էին վերապահում իրենց այդ վնասի դիմաց որոշ դրամական հատուցում

³ Farman-e Hasan Ali Gharakoyunlu;1468.

⁴ Farman-e Mahmud Mirzakhani Wali Kurjistan Kartel;1594.

⁵ Նույն տեղում

⁶ Mohammad Peyghambar-Be jamaate aramane surat ahd;1568.

⁷ Farman-e Soltan Mohammad-e Khodabande Safavi;1582.

⁸ Farman-e Shah Tahmasb Safavi;1555.

պահանջելու:

نوروزی - «նորոտուզի»- Նոր տարվա առաջին օրը՝ զարմանամուտին, ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին վճարվող պարտադիր նվեր-տուրքը⁹:

شاه کار - «շահ քար»- Նշանակել է շահի համար կատարվող անվճար աշխատանք:

زر چریک - «զար-է չերիք»- Սա այն տուրքն էր, որ գանձվում էր հպատակ գյուղացիներից այն դեպքում, երբ քոչվորությունից աշխարհագոր էր հավաքվում: Այդ տուրքը հատուցվում էր ոսկով:

سأوری - «սավարի»- Հատուկ տուրք էր, որ գանձվում էր գյուղացիներից, երբ տվյալ վայրից անցնում կամ այնտեղ իջևանում էր շահը, կամ թագավորական ընտանիքից որևէ մեկը՝ իր շքահմբով: «Սավարի» էր գանձվում մասնապետների երթևեկության ժամանակ: Հաճախ պատահում էր, որ օտար դեսպաններ էին գալիս և ամիսներ շարունակ կանգ էին առնում Երևանում, մինչև որ կենտրոնից իրավունք կստացվեր շահին ներկայանալու: Ամբողջ այդ ժամանակահատվածում նրանք կերակրվում և հանգստանում էին շրջակա գյուղերից գանձվող «սավարիի» հաշվին:

وزیرانه - «վազիրանե»- Սա այն տուրքն էր, որ գանձվում էր ինչպես գլխավոր «վազիր-է դիվանի», այնպես էլ նահանգային վազիրների օգտին¹⁰:

پروانچه - «փարվանչե»- Պաշտոնական գրություն, հրամանագիր, հրովարտակ¹¹:

پیشکش - «փիշքեշ»- Զանազան առիթներով բնակչության կողմից ֆեոդալային և պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք¹²:

کلانتر - «քալանթար»- Բառացի նշանակում է «ամենամեծ»: Այսպես էին կոչվում քաղաքագլուխները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում էին քաղաքի հասարակական գործերին: Նրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստներից¹³:

کدخدأ - «քյադխոդա»- Այսպես էին կոչվում գյուղական ավագները: Մի գյուղում կարող էին լինել մի քանի «քյադխոդաներ», նրանք գյուղի ավագների խորհրդի անդամներ էին, որոնք այդ անունը ստացել էին երբևէ գյուղի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քյադխոդաներ¹⁴:

پادشاه - «փադեշահ»- թագավոր, արքա:

فرمان - «ֆարման»- հրաման, թագավորական հրովարտակ:

⁹ Farman-e Shah Esmail Safavi;1573.

¹⁰ Farman-e Mahmud Mirzakhan Wali Kurjistan Kartel;1594

¹¹ Farman-e Shah Tahmasb Safavi;1570;

¹² Farman-e Shah Esmail Safavi;1545.

¹³ Նույն պեղում:

¹⁴ Farman-e Soltan Jahanshah Gharakoyunlu;1582.